Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին:

Մեր վերապահումով կարծիքը

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքը» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Վերապահումով կարծիքի հիմքը

Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում արտացոլված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխանաբար կազմում է 42,730,794 հազար դրամ և 60,795,005 հազար դրամ, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30,899,149 հազար դրամ և 60,811,008 հազար դրամ: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ում բացահայտված տեղեկատվությունը վկայում է այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք հանդիսանում են տվյալ ակտիվների հնարավոր արժեզրկման հայտանիշ: Այնուամենայնիվ, Ընկերությունը չի իրականացրել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փոխհատուցվող գումարի չափում, համաձայն ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի՝ որոշելու համար տվյալ ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազման և արժեզրկումից կորստի ճանաչման անհրաժեշտությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների համար: Մեր կարծիքով, 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը գերագնահատված է, սակայն Ընկերության կողմից ակտիվների փոխհատուցվող գումարի չափման բացակայության պայմաններում, մենք հնարավորություն չենք ունեցել գնահատել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազման, ինչպես նաև ճանաչման ենթակա արժեզրկումից կորստի գումարը:

«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՄՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ալեքսեյ Ռուսանով
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

5 մարտի 2022թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	42,730,794	30,899,149
Ոչ նյութական ակտիվներ	9	60,795,005	60,811,008
Ժամկետային ավանդներ	12	400,000	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**103,925,799**	**91,710,157**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	2,831,184	3,493,961
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	668,624	648,202
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվներ	3	714,566	448,433
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		47,143	34,156
Ժամկետային ավանդներ	12	3,419,690	8,217,726
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	1,095,382	238,715
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**8,776,589**	**13,081,193**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**112,702,388**	**104,791,350**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	104,152,946	104,152,946
Կուտակված վնաս		(3,648,933)	(4,915,447)
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**100,504,013**	**99,237,499**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկային պարտավորություն	15	6,838,491	-
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		247,291	260,731
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ	25	1,975,109	1,898,958
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**9,060,891**	**2,159,689**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկային պարտավորություն	15	8,928	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	1,768,491	1,790,828
Կրեդիտորական պարտքեր անձնակազմին		692,045	737,103
Աշխատակիցներին հատուցումների գծով պահուստ		60,019	50,498
Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ	17	608,001	815,733
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**3,137,484**	**3,394,162**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**12,198,375**	**5,553,851**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**112,702,388**	**104,791,350**

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2022թ. մարտի 5-ին:

Ալեքսեյ Մելնիկով
Գլխավոր տնօրեն

Վեներա Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Հասույթ	18	21,020,962	20,946,798
Վաճառքի ինքնարժեք	19	(18,601,565)	(17,556,852)
Համախառն շահույթ		**2,491,397**	**3,389,946**
Այլ գործառնական եկամուտ	20	1,326,390	820,264
Իրացման ծախսեր	21	(123,326)	(141,371)
Ընդհանուր և վարչական ծախսեր	22	(2,257,309)	(2,432,689)
Այլ գործառնական ծախսեր	23	(326,543)	(187,961)
Գործառնական շահույթ		**1,038,609**	**1,448,189**
Ֆինանսական եկամուտներ	24	731,137	712,300
Ֆինանսական ծախսեր		(206,124)	-
Շահույթ մինչև հարկումը		**1,563,622**	**2,160,489**
Շահութահարկի գծով ծախս	25	(297,108)	(294,769)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**1,266,514**	**1,865,720**
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**1,266,514**	**1,865,720**

5-53 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հազ. ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Առ 1 հունվարի 2020թ.	**104,152,946**	**(6,781,167)**	**97,371,779**
Ընդամենը 2020թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,865,720	1,865,720
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**104,152,946**	**(4,915,447)**	**99,237,499**
Ընդամենը 2021թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,266,514	1,266,514
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**104,152,946**	**(3,648,933)**	**100,504,013**

5-53 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ մինչ շահութահարկով հարկումը		1,563,622	2,160,489
Ճշգրտումներ.			
Հիմնական միջոցների մաշվածություն և արժեզրկում	8	1,376,631	1,032,117
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	9	3,638,282	3,484,553
Կոնցեսիոն ակտիվների բարելավում	18, 26	(3,253,828)	(2,461,536)
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս/(եկամուտ)	20, 23	35,848	(28,613)
Եկամուտներ ակտիվների ապամոնտաժումից	20	(26,853)	(44,872)
Տոկոսային եկամուտներ	24	(380,987)	(712,300)
Տոկոսային ծախսեր		206,124	-
Փոխարժեքային տարբերություններից զուտ (եկամուտ)/վնաս	20, 24	(584,528)	30,613
Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով պահուստի աճ	23	-	4,747
Պաշարների դուրսգրում	23	7,685	36,055
Այլ պահուստների (նվազում)/աճ	17,20, 23	(61,368)	48,626
Առևտրային կրեդիտորական պարտքերի հրաժարումից եկամուտ	20	-	(1,978)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխությունները		**2,520,628**	**3,547,901**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/նվազում		(78,704)	355,837
Պաշարների նվազում/(աճ)		642,105	(649,612)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)		182,026	(312,666)
Շրջանառու կապիտալի փոփոխություններ		**745,427**	**(606,441)**
Ստացված տոկոսներ		899,616	445,660
Սահմանափակ օգտագործման կարճաժամկետ ակտիվների վճարում		(530,151)	(481,000)
Վճարված տոկոսներ	15	(170,721)	-
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		**3,464,799**	**2,906,120**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(13,172,417)	(2,388,506)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(394,107)	,(196,222)
Ժամկետային ավանդների տեղաբաշխում		(4,871,420)	(5,921,410)
Ժամկետային ավանդների մարումից մուտքեր		8,670,830	5,420,865
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		**(9,767,114)**	**(3,085,274)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարկերի և փոխառությունների ստացում	15	7,578,103	-
Վարկերի և փոխառությունների մարում	15	(415,937)	-
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		**7,162,166**	**-**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(3,184)	418
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**13**	**238,715**	**417,451**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**13**	**1,095,382**	**238,715**